

ՄԻՄԵՈՆ ԵՐԵՎԱՆՑՈՒ ՀՈԳԵՎՈՐ ՈՒ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ  
ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Գասպարյան Ա. Ա., Ղազարյան Հ. Ս.

Հոդվածի շրջանակներում սկզբնաղբյուրների հաղորդումների և գիտական գրականության համադրմամբ առանձին ուսումնասիրության առարկա է դարձել Սիմեոն Երևանցու հոգևոր ու գիտական գործունեությունը, որն առանձնահատուկ հետք է թողել մեր ժողովրդի պատմական կյանքում: Նրա գրչին են պատկանում կրոնական, փիլիսոփայական ու պատմագիտական բնույթի բազմաթիվ աշխատություններ, որոնք կարևոր սկզբնաղբյուրներ են համարվում հայ պատմագրության մեջ:

Սիմեոն Երևանցի հոգևորականը և պատմագիրը աչքի է ընկնում նաև ազգային-հայրենասիրական ու քաղաքական հսկայածավալ աշխատանքներով:

**Բանալի բառեր.** Սիմեոն Երևանցի, հոգևորական, կաթողիկոս, պատմագիր, Էջմիածին, Մայր Աթոռ, Եկեղեցի, դավանանք, «Ջամբո», պատմագրություն, քաղաքական, տնտեսական:

**Նախաբան:** XVII-XVIII դարերի հայոց պատմության հիմնահարցերի ուսումնասիրությունը հայ պատմագիտության կարևոր հիմնախնդիրներից մեկն է: Այդ ժամանակաշրջանը բնութագրվում է որպես հայ միջնադարյան պատմագրության վերջին փուլ և վերելքի շրջան [12], [308]:

Հիշյալ շրջանի տարաբնույթ հիմնախնդիրների ուսումնասիրման տեսանկյունից առանձնահատուկ դեր ու նշանակություն ունի Սիմեոն Երևանցու հոգևոր ու պատմագիտական ժառանգության ուսումնասիրումը, որի հավաստիության աստիճանն էլ ավելի է

բարձրանում, երբ այն դիտարկում ենք պատմաքննական, պատմահամեմատական ու համադրական մեթոդների վերլուծությամբ:

Թեմայի նորույթը այն է, որ, չնայած հայագիտության ոլորտում Միմեոն Երևանցու անձի և գործունեության վերաբերյալ գոյություն ունեցող բազմաթիվ գիտական աշխատություններին ու հոդվածներին, այսուհանդերձ հոգևոր ու պատմագիտական ժառանգության համադրման ուսումնասիրման ուղղությամբ առանձին ու համապարփակ ուսումնասիրություն չի իրականացվել:

Ուստի մենք փորձել ենք հոգևոր ու պատմագիտական ժառանգության համատեղ ուսումնասիրմամբ քննության ենթարկել Միմեոն Երևանցու աշխատությունների արժանահավատությունը և նրա քաղաքական ու հոգևոր գործունեության վերաբերյալ գոյություն ունեցող հակասական մոտեցումները:

Հետևաբար, Միմեոն Երևանցու աշխատությունների ուսումնասիրումն արդիական է հատկապես հայ պատմագիտության համար, քանզի պատմական, վիճակագրական հավաստի տեղեկությունները մեծապես կարևորում են Միմեոն Երևանցու հաղորդումները նաև արդի իրողությունների տեսանկյունից:

Մեր առջև դրված խնդիրներից է անդրադառնալ Միմեոն Երևանցու հոգևոր ու պատմագիտական ժառանգության հիմնական արժեքներին, արժևորել վերջինիս մատենագրական ժառանգությունը, ինչպես նաև դրանց հիման վրա լուսաբանել ժամանակաշրջանի հրատապ հիմնախնդիրները:

Թեմայի ուսումնասիրման գործում հատկապես կարևորվում է Գ. Աղանյանի «Դիւան հայոց պատմութեան» աշխատության Ա-Բ-Գ հատորները ու Միմեոն Երևանցու Յիշատակարանը [5-7]:

2003թ. հրատարակվել է Միմեոն Երևանցու «Ջամբո»-ի աշխարհաբար թարգմանությունը [16], որն առանձնանում է նաև իր ուրույն լեզվով: Մասնագետների մոտավոր հաշվարկներով «Ջամբո»-ը պարունակում է ավելի քան երեք հարյուր նորակազմ բառեր, որոնք համարվում են բառարանագրման կարևոր ձեռքբերումներ [10], [43]:

Թեմայի ուսումնասիրման ոլորտում նշանակալի աշխատություններ է հրատարակել Հ. Օհանյանը, որը բավականին հանգամանալից ուսումնասիրման ու վերլուծության է ենթարկել Միմեոն Երևանցու պատմագիտական ու հոգևոր գործունեությունը: Վերջինս մասնավորապես անդրադարձել է «Ջամբո» աշխատության արժևորմանը՝ որպես ժամանակաշրջանի իրադարձությունների

ուսումնասիրման անգուգական սկզբնաղբյուր [17], [11]: Գիտնական պատմաբանը անդրադարձել է նաև Միմեոն Երևանցու գործունեությանը մինչև կաթողիկոս ընտրվելը [20], [230], ինչպես նաև Մայր Աթոռի և Գանձասարի կաթողիկոսությունների փոխհարաբերությունների պատմությանը [18], [290]: Հիշատակության է արժանի հատկապես Ռուսական կայսրության և Ամենայն Հայոց կաթողիկոսության փոխահարաբերությունների հիմնահարցերին նվիրված աշխատությունները [19], [87]:

Միմեոն Երևանցի կաթողիկոսը (1763-1780)թթ. [2], [147] հինգ անարդյունք ժողովներից հետո վերջապես ընտրվում է Ամենայն Հայոց կաթողիկոս ու շարունակում իր ակտիվ հոգևոր ու գիտական գործունեությունը [8], [ՀԹ-Ձ]: Նա հայտնի է դավանաբանական, քարոզիչական, մեկնողական, ծիսագիտական, փիլիսոփայական, գեղարվեստական բարձրարժեք երկասիրություններով, ինչպես նաև Հայոց եկեղեցուն նվիրված բազմաթիվ աշխատություններով [11], [318]: Ապագա հայրապետի ուսումնական ու հոգևոր ողջ գործունեությունը կապված է եղել Հայ առաքելական եկեղեցու հետ [20], [235]:

Միմեոն Երևանցին հստակ գիտակցում էր, որ նման ծանր ժամանակաշրջանում հայ ժողովրդի փրկության հենքը ազգային եկեղեցին է. «Մնեալ և վարժեալ ի մանկութենէ ի ծոց սրբոյ Աթոռոյս» [15], [6]:

Նրա մատենագրական վաստակի գաղափարական բովանդակությունը էջմիածնասիրությունն է և հայրենասիրությունը, ուստի իրեն հատուկ հետևողականությամբ պաշտպանում էր Մայր Աթոռի ընդհանրական շահերն ու համազգային իրավունքները [14], [37]:

Պատմագիր կաթողիկոսը դատապարտում է բոլոր այն կաթողիկոսներին, ովքեր կատարել են եկեղեցական օրինազանցություններ, իսկ հարկ եղած դեպքում պատժում էր նաև այն հոգևորականներին, ովքեր թերանում էին իրենց հոգևոր ծառայության ոլորտում [6], [828]:

Հայրենասեր կաթողիկոսը առանձնապես կարևորել է հոգևոր կենտրոնի անելիքներն ազգային ինքնագիտակցության ձևավորման ու զարգացման գործում [3], [201]:

Միմեոն Երևանցին միաժամանակ իրականացրել է նաև շինարարական լայնածավալ աշխատանքներ [13], [50-62]: 1771 թվականին Մայր Աթոռում Միմեոն Երևանցու ջանքերով հիմնվում են առաջին տպարանը, ապա թղթի գործարանը 1776թ. [1], [62]:

Կարգավորել է նաև հայոց Տոնացույցը, որն էլ տպագրել է իր հիմնած տպարանում՝ 1774 թ. [4], [32]:

Հայ եկեղեցու նախանձախնդիր հետևորդը խիստ հալածանքների է ենթարկել կաթողիկոսյանը հարած այն հոգևորականներին, ովքեր պառակտիչ գործունեություն են ծավալել հայ եկեղեցու նկատմամբ [15], [42]:

Նա մեծ ջանքեր է գործադրել հոգևոր կենտրոնից բռնագրավված կալվածքները վերադարձնելու և նոր կալվածքներ ձեռք բերելու ուղղությամբ [18], [290-291]:

Պատմագիրը ցավով նշում է. «Արդ լա՛ց գգլուխ կաթուղիկոսին, որ յայսպիսում ժամանակի պատահի՝ որպես և եսս որ գրեմս ամբոխեցեալ մտօք և թշուառ ական կենօք» [15], [58]:

Միմեոն Երևանցու պատմագիտական ժառանգության մեջ առանձնանում է «Ջամբո»-ը, որն իր բնույթով բացառիկ մի գործ է՝ պատմական ու դիվանական նյութերի յուրահատուկ ժողովածու: [17], [12]: Այն պարունակում է աղբյուրագիտական արժեքավոր տվյալներ, որոնց ուսումնասիրությունը պատմական իրադարձությունների համատեքստում լրացնում ու ավելի ամբողջական է դարձնում տվյալ ժամանակաշրջանին վերաբերող փաստագրական նյութը [20], [228]:

Լեոն Միմեոն Երևանցուն համարել է «ամենախոշոր անձնավորությունը XVIII դարի հայ լուսավորչական հոգևորականության մեջ», իսկ նրա «Ջամբո»-ը՝ «Էջմիածնի իրավական դրության հանրագիտարան» [9], [279-280]:

«Ջամբո»-ը կարևոր ու արժանահավատ տեղեկություններ է հաղորդում հայ-ռուսական, հայ-վրացական հարաբերությունների, ինչպես նաև Պարսկաստանի ու Թուրքիայի ներքաղաքական կացության վերաբերյալ [16], [507-512]:

Լինելով համոզված լավատես՝ մշտապես հուսադրում էր ժամանակակիցներին ու գալիք սերունդներին [3], [207]:

Պարսկական ու թուրքական տիրապետության պայմաններում քաղաքական նկատառումներով ստիպված է եղել դատապարտել Հովսեփ Էմինի՝ Հայաստանի ազատագրման ծրագիրը, ապա նաև Մադրասի խմբակի գործունեությունը: Սակայն դեմ չի եղել Հայաստանի ազատագրմանը որևէ հզոր քրիստոնյա պետության օգնությամբ ու այդ նպատակով անգամ կապ է հաստատել ռուսական արքունիքի հետ [19], [83-84]:

Մատենագիր հոգևորականը մեծ գովեստով է խոսում XVII- XVIII դարերի այն կաթողիկոսների մասին, ովքեր ծավալել են հայրենանպաստ գործունեություն [15], [21-33]:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Սիմեոն Երևանցի կաթողիկոսի վերլուծությունները նաև փիլիսոփայության բնագավառում: Բազմազբաղ հոգևոր գործիչը հատկապես հիացած էր Արիստոտելի աշխատություններով ու երկերով. «Արիստոտել միտն անզբաղ, Բանասիրաց համեմիչ աղ: Զընթրիս շնորհալիս կազմե, Եվ զմիտս պարզս հրավիրե» [7], [33]:

Հայ առաքելական եկեղեցու հավատավոր նվիրյալը վախճանվեց 1780թ. հուլիսի 16-ին՝ Վարդավառի տոնակատարության օրը [5], [3-4]: Աճյունն ամփոփված է Սուրբ Գայանե եկեղեցու գավթի հարավային կողմում:

**Եզրահանգում:** Փաստական նյութի ուսումնասիրմամբ ի մի են բերվել հոդվածի հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

1. Սիմեոն Երևանցու հոգևոր ու մատենագրական ժառանգությունը էականորեն տարբերվում է հայ պատմագրական մյուս ժառանգություններից՝ մասնավորապես հավաստի աղբյուրների և արխիվային նյութերի օգտագործմամբ:

Առ այսօր էլ դրանք պահպանում են իրենց գիտականությունը, հրատապությունը, արդիականությունը և աղբյուրագիտական բացառիկ արժեքը՝ լինելով արժանահավատ ու ստուգապատում սկզբնաղբյուրներ՝ հազեցած բազմաթիվ աղբյուրների և արխիվային վավերագրերի առկայությամբ:

2. Սիմեոն Երևանցին Մայր Աթոռը դեկավարել է բավականին ծանր ժամանակաշրջանում, սակայն պահպանել է Մայր Աթոռի կարգավիճակը ու այն վերածել հայությանը համախմբող կենտրոնի:
3. Ամենայն Հայոց կաթողիկոսի հոգևոր ու գիտական գործունեությունն ամբողջովին ուղղված էր հայ եկեղեցու և պետության դերի ամրապնդմանը, իսկ նրա պատմագիտական ժառանգությունը համարվում է անգնահատելի, շատ դեպքերում անգամ բացառիկ ու առանձնահատուկ՝ մասնավորապես տարաբնույթ հիմնահարցերի լուսաբանման առումով:
4. Լինելով ներկայացված իրադարձությունների ականատեսն ու մասնակիցը՝ մանրակրկիտ կերպով շարադրում ու մեկնաբանում

է այն բոլոր իրադարձությունները, որոնք կարևոր դեր են ունեցել երկրի հոգևոր ու քաղաքական կյանքում:

5. Այս ամենը համադրելով այլ աղբյուրների հաղորդումների հետ՝ հստակ պատկերացում ենք կազմում եկեղեցու և ազգի նվիրյալ կաթողիկոսի անձնական, հասարակական, քաղաքական, գիտական ու հոգևոր բարձր հատկանիշների մասին:

Միմեռն Երևանցու հոգևոր ու պատմագիտական ժառանգությունը, իրավամբ, համարվում է հայ պատմագրության անզուգական հուշարձան:

## О ДУХОВНОМ И ИСТОРИОГРАФИЧЕСКОМ НАСЛЕДИИ СИМЕОНА ЕРЕВАНЦИ

Гаспарян А. А., Казарян А. С.

В рамках статьи, сопоставляя передачи первоисточников и научную литературу, предметом отдельного изучения стала духовная и научная деятельность Симеона Ереванци, который оставил особый след в исторической жизни нашего народа.

Его перу принадлежат многочисленные труды религиозного, философского и историографического характера, которые считаются важными первоисточниками в армянской историографии.

Священнослужитель и историк, Симеон Ереванци выделяется также колоссальными национально-патриотическими и политическими трудами.

**Ключевые слова:** Симеон Ереванци, священник, Католикос, историк, Эчмиадзин, Первопрестольный Эчмиадзин, церковь, вероисповедание, «Джамбр», историография, политическая, экономическая.

## THE SPIRITUAL AND HISTORICAL HERITAGE OF SIMEON YEREVANTSI

Gasparyan A. A., Ghazaryan H. S.

The paper touches upon Simeon Yerevantsi's spiritual and scientific activity that has an important influence on the historical life of our nation. For conducting the research we have had important sources and scientific literature.

He is the author of numerous works of religious, philosophical and historical nature, which are considered to be important sources in Armenian historiography.

The clergyman and historiographer Simeon Yerevantsi is noteworthy for his large-scale national-patriotic and political works.

**Keywords:** Simeon Yerevantsi, clergyman, Catholicos, historiographer, Etchmiadzin, Mother See, church, religion, “Jambr”, historiographer, political, economic.

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Հ. Թղթի գործարան Հայաստանում:// Գիտական նյութերի ժողովածու: 1941: N 1: Էջ 61-72: <http://www.matenadaran.am> (17.07.2021):
2. Այվազյան Ա. Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում: Երևան: «Լուսակն» հրատարակչություն: 2003: 344 էջ: <https://artsakhlib.am> (27.07.2021):
3. Բարայան Լ. Հ. Դրվագներ Հայաստանի XIV-XVIII դարերի պատմագրության: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն: 1984: 294 էջ:
4. Գասպարյան Ա. Ա. Իրանի պատմության հարցերը XVII-XVIII դարերի հայ պատմիչների երկերում: Երևան: ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ: 2016: 201 էջ:
5. Դիհան Հայոց պատմութեան: Գիրք Ա.-Բ: 1780-1834: Խմբագրեց Գիտ քահանայ Ադանեանց: Թիֆլիս: Տպարան Ս. Շարաձե, 1893: 326 էջ: <http://koha.etchmiadzinlibrary.am> (17.07.2021):
6. Դիհան Հայոց պատմութեան: Գիրք Գ: Սիմեոն կաթողիկոսի Յիշատակարանը կենսագրութեամբ եւ յաւելուածներով ու ծանօթութիւններով, հրատարակեց Գիտ քահանայ Ադանեանց: Թիֆլիս: Տպարան Ս. Շարաձե: 1894: 892 էջ: <http://koha.etchmiadzinlibrary.am> (17.07.2021):
7. Դիհան Հայոց պատմութեան: Գիրք Ը: Սիմեոն կաթողիկոսի Յիշատակարան: Մասն երկրորդ (1767-1776): Մի նկարով, հրատարակեց Գիտ Ա. քահանայ Ադանեանց: Թիֆլիս: Ելեքորաշարժ տպարան: 1908: 664 էջ: <http://koha.etchmiadzinlibrary.am> (17.07.2021):

8. Դիւան Հայոց պատմութեան: Գիրք ԺԱ: Միմեոն կաթողիկոսի Յիշատակարանը: մասն III –վերջին (1777-79): Հրատարակեց Գիիտ Աղանեանց Ա. քահ. հնդկահայերի հանրագրի արտատիպով: Թիֆլիս: Ելեքտրաշարժ տպարան: 1913: 504 էջ: <http://koha.etchmiadzinlibrary.am> (17.07.2021):
9. Լեո Երկերի ժողովածու: Երրորդ հատոր: Երևան: «Հայաստան» հրատարակչություն: 1973: 640 էջ:
10. Համբարձումյան Վ. Գ. Միմեոն կաթողիկոս Երևանցու «Ջամբո» երկի բառապաշարը: ԿԲ տարի: Համար Ե: Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան: 2006: 13 էջ: <https://etchmiadzinlibrary.am> (27.07.2021):
11. Հայոց պատմություն: Հատոր III: Նոր ժամանակաշրջան: /XVII դարի երկրորդ կես-1918թ. Գիրք առաջին XVII դարի երկրորդ կես-XIX դարի վերջ/: Երևան: «Զանգակ-97» հրատարակչություն: 2010: 704 էջ:
12. Մարգարեան Հ. Գ. Միջնադարեան հայ պատմագրութեան բնութագրական գծերը եւ պարբերացումը:// Հանդէս ամսօրեայ: Հայագիտական ուսումնաթերթ: ՃԻԸ տարի 2014: Յանուար-Դեկտեմբեր: Թիվ 1-12: Էջ 276-316: <http://tert.nla.am> > Table (19.07.2021):
13. Յարութիւնեան Վ. Մ. Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները: Երևան: Տպ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի: 1996: 124 էջ:
14. Պարզև Եպիսկոպոս Գևորգյան Միմեոն Կաթողիկոս Երևանցու ջանքերը հայ եկեղեցու միասնության և հայ ժողովրդի ազգապահպանման գործում: //Պաշտոնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի: ԻԸ տարի: Էջմիածին: Դեկտեմբեր: ԺԲ: 1972: Էջ 35-41 <https://www2.flib.sci.am> > Ejm... (21.07.2021):
15. Միմեոն կաթողիկոս Երեւանցի. Ջամբո: Գիրք, որ կոչի յիշատակարան արձանագուցիչ,հայելի եւ պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս,եւ իւրոց շրջակայից վանօրէիցն: Ի Վաղարշապատ: Ի տպարանի սրբոյ կաթողիկէ Էջմիածնի: 1873: 304 էջ: <https://books.google.com> > (20.07.2021):
16. Միմեոն կաթողիկոս Երևանցի. Ջամբո: Հիշատակարան Էջմիածնի Սուրբ Աթոռոյ եւ նրա հարակից վանքերի: (թարգմանությունը, առաջաբանը, ծանոթագրությունները Վ. Համբարձումյանի,



- պատմաաշխարհագրական բնույթի ծանոթագրությունները և քարտեզները՝ Գ. Մ. Բադալյանի): Երևան: Մուղնի: 2003: 607 էջ:
17. Օհանյան Հ. Ռ. Սիմեոն Երևանցու «Ջամբո» աշխատությունը որպես XVII-XVIII դարերի հայոց պատմության սկզբնաղբյուր: Մեղմագիր: Երևան: 2016: 26 էջ: <http://www.academhistory.am> › atekhosutyunner (21.07.2021):
  18. Օհանյան Հ. Ռ. Սիմեոն Երևանցու «Ջամբո» որպես Ս. Էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսությունների փոխհարաբերությունների պատմության սկզբնաղբյուր:// «Պատմություն և մշակույթ» Հայագիտական հանդես: Երևան: ԵՊՀ հրատարակչություն: 2016: էջ 285-296:
  19. Օհանյան Հ. Ռ. Ս. Էջմիածնի և Ռուսական կայսրության փոխհարաբերություններն ըստ Սիմեոն Ա Երևանցու «Ջամբոի»: // Պաշտոնական ամսագիր Ամենայն Հայոց կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի: Մայիս: ՀԴ տարի: 2017: էջ 80-89: <https://etchmiadzinlibrary.am> ( 21.07.2021):
  20. Օհանյան Հ. Ռ. Սիմեոն Երևանցու գործունեությունը մինչև կաթողիկոս ընտրվելը ըստ «Ջամբո» երկի:// Բանբեր Մատենադարանի: № 22: 2015: էջ 228-238: <http://www.matenadaran.am> (21.07.2021):

**Տեղեկություններ հեղինակների մասին**

**Գասպարյան Ա. Ա.** - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ  
Շիրակի պետական համալսարան  
Էլ. փոստ՝ [ArshavirGasparyan@mail.ru](mailto:ArshavirGasparyan@mail.ru)

**Ղազարյան Հ. Մ.** - պատմության ուսուցչուհի  
Արմավիրի մարզի Վաղարշապատի թիվ 4 հիմնական դպրոց  
Էլ. փոստ՝ [hasmik.ghazaryan.87@mail.ru](mailto:hasmik.ghazaryan.87@mail.ru)

Տրվել է խմբագրություն՝ 15.09.2021  
Գրախոսվել է՝ 26.12.2021